№ 126 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 8 1900 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 8 № 126

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Աննա Կարապետեան Հազարապետեան եւ Եփեմիա Կարապետեան Փրիդոնեան ցաւօք սրտի յայտնում են ազգականներին եւ ծանօթներին՝ առաջինն իր ամուսնու եւ երկրորդն իր փեսայի՝ Ախալքալաքի նախկին գաւառապետի օգնական՝

ԻՍԱՀԱԿ ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆԻ

մահը։ Յուղարկաւորութիւնը լինելու է կիրակի օրը, ամսոյս 9-ին, առաւօտեան ժամը 9½-ին Ե. Գ. Զոհրաբեանի բնակարանից, Նիկոլաեվսկայա փողոց, № 31, դէպի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցին։ Հոգեհանգիստը լինելու է շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին։
1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհաւասար մաքառման զոհերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական գործերը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն։

ԱՆՀԱՒԱՍԱՐ ՄԱՔԱՌՄԱՆ ԶՈՀԵՐԸ

—

Ասիական Արեւելքում ծագած բարդ և լուրջ խառնակութիւնների պատճառով մոռացվեց հարաւային Աֆրիկայում տեղի ունեցող երկարատեւ պատերազմը։ Անգլիան մինչեւ այժմ չը կարողացաւ ընկճել փոքրիկ հանրապետութիւններին։ Չը նայելով այն հանգամանքին, որ նա պատերազմի շրջանում ունի քառորդ միլիոնի չափ մի ահագին զինուորական ոյժ և յաղթութեամբ առաջ է գնացել՝ վերցնելով հանրապետութիւնների մայրաքաղաքները և ուրիշ նշանաւոր կէտեր, դարձեալ շարունակվում է պատերազմը առաջվայ ձեւով։

Բանն այն է, որ բօէրները կռւի չեն բռնվում մեծ զօրաշղթերով և խուսափելով ճակատամարտներից՝ պահպանում են իրանց զինուորական ոյժը իր սպառնացող վիճակի մէջ։ Իսկ քանի գոյութիւն ունի կանոնաւոր բօէրական զօրքը և նա դեռ ունի պատսպարվելու յարմարաւոր տեղեր, մինչեւ այդ՝ Անգլիան չէ կարող համարել պատերազմը վերջացած և չէ կարող անդորրութեան մատնել իրան։ Բօէրների զօրքերը սկսում են կարօտութիւն և կարիքներ զգալ։ Թէև ճիշդ է, որ նրանք սովոր են չարքաշ կենցաղավարութեան և գտնվում են իրանց հայրենի շրջանում, որտեղ նրանց պատսպարում են և ամեն կերպ օգնում, բայց ամեն մի զոհաբերութիւն ունի իր սահմանը։

Հերոսաբար կռւող հարաւ-աֆրիկական հանրապետութիւնները մեծ յոյս ունէին Եւրոպայի և Ամերիկայի աջակցութեան վրա։ Նրանք ենթադրում էին, որ Անգլիայի ոսոխները և հակառակորդները կօգտվեն դէպքից և կանցնեն բօէրների կողմը, նրանք իրանց յոյսը դեռ չեն կտրել նոյն իսկ այժմ, երբ չինական հողի վրա վառվել է մի սարսափելի հրդեհ, որին զոհ են գնում եւրոպական և նրանց թւում անգլիական շահերը։ Բօէրները կարծում են, որ դեռ չէ կորել իրանց դատը, քանի Անգլիան ընկել է մի նոր փորձանքի մէջ։ Սակայն բօէրների այդ յոյսը անհիմն է և խաբուսիկ։ Անգլիան այնտեղ գործում է բազմաթիւ ուրիշ զինակիցների հետ միասին և անգլիական շահերը պաշտպանվում են այնտեղ Եւրոպայի և Ամերիկայի հաւաքական ոյժով։ Չինական գործերի պատճառով ոչ ոք հաճութիւն չի զգայ Անգլիայի դէմ հաշիներ բանեցնելու և բարեիսօսելու հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների համար։

Մանր է, շատ մանր փոքրիկ անկախ հանրապետութիւնների վիճակը։ Կորցնել անկախութիւնը յուսախաբութեան, ենթադրական զինակցութեան, խախուտ խոստումների պատճառով, դա մի սոսկալի փորձանք է, որին ենթարկվեցին բօէրների մտաց պետութիւնները այն ժամանակ, երբ Եւրոպան պարծենում է իր հասարակական կարծիքի անխորտակելի ոյժով։ Ի՞նչ արեց հասարակական կարծիքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

II

Ռուսաց «Жизнь» ամսագրի նոր ստացված յունիսեան տետրում մեծ հետաքրքրութեամբ կարդացվում է Եւգ. Զիրիկօվի տաղանդաւոր պատմածքը «Именинница», որ Տօլստոյի «Յարութիւն» վէպի նման, կարող է իբրեւ լուս գեղարուեստական լուսաբանութիւն ծառայել աբօլիցիօնիստների հայեացքներին (տես մեր յօդուածները «Աբօլիցիօնիզմի» մասին «Մշակ», 1899, №№ 195, 196, 201, 202, 204, 205, 211 եւ 212)։

Քաղաքակիրթ կեանքի ներկայ պայմաններում կարելի է գրեթէ անվիճելի ճշմարտութիւն համարել այն կարծիքը, թէ ամեն մի սիրուն եւ անտէր աղջկայ վիճակված է վերջ ի վերջոյ ընկնել անառակատուն, չնորհիւ տղամարդկանց։

Այդպիսի մի աղջիկ էր եւ Զիրիկօվի պատմածքի հերոսուհին, Օլգան, որ Կլարա կեղծ անունն է կրում անառակատանը։ Այսօր նրա անուանակոչութեան տօնն է։ Այսօր նա պահանջ է զգացել դուրս պրծնել անառակատան պիղծ մթնոլորտից, գնալ եկեղեցի, այցելել այն վայրերը, ուր անցել է նրա մանկութիւնը, եւ գոնէ մի օր պատկանել ինքն իրան։

«Կորած կին» է նա, բայց նրա հոգու մէջ, այնտեղ, խորքում, կենդանի են մնացել բոլոր մարդկային զգացմունքները,—այն զգացմունքները, որ մի շարք տղամարդիկ, «հետեւելով միշտ օրինաց աշխարհի», ամեն կերպ աշխատում էին ոտնակոխ անել նրա մէջ։

Անցեալի յիշողութիւնները պաշարում են նրան։ Վառ գոյներով նկարագրում է հեղինակը նրա անկման պատմութիւնը։

Պատահմամբ նա հանդիպում է այն մարդուն, որ բռնաբարել էր իրան տասնհինգ տարեկան ժամանակ։

«Տարօրինակ բան է, բայց Կլարայի սրտում չը շարժվեց նոյն իսկ մի նշոյլ թշնամութեան դէպի այդ մարդը... Ասենք՝ ինչու պէտք է Կլարան առանձնապէս ատէր այդ մարդուն։ Մի՞թէ միւս բոլոր տղամարդիկ էլ, որոնք տեսնում էին, որ նա մաքուր եւ միամիտ աղջիկ է, չէին աշխատում նոյն բանն անել նրա հետ։ Մի՞թէ նրանց բոլորին էլ հարկաւոր էր մի ուրիշ բան նրա մէջ, քան այն, որ խլեց նրանից Պավլին Եգորիչը։ Ոմանք աւելի հնարագէտ էին եւ համարձակ, միւսները աւելի երկչոտ, իսկ իրօք մի՞թէ ամեն մէկն այդ տղամարդկանցից, ծեր ու ջահիլ, որոնք ագահաբար նայում էին նրա թարմ, ճկուն մարմնին, լպիրշ եւ երկիմաստ խօսքեր էին ասում, աշխատում էին ձեռքերը կպցնել կրծքին,—միթէ նրանցից ամեն մէկը չէ՞ր ուզում անել նոյնպիսի կեղտոտութիւն»...

Ամբողջ պատմածքը թափանցված է վերին աստիճանի մելամաղձիկ եւ մի եւ նոյն ժամանակ խորապէս մարդկային զգացմունքով։ Չէ կարող գտնվել այնքան անսիրտ ընթերցող, որ կարդայ պ. Զիրիկօվի գրուածքը եւ չը խոստովանի, որ, այսպէս կոչված, «կորած արարածները», «ընկած կանայք», ոչ այլ ինչ են, որ աւելի յաճախ էր չփվում տիրողների հետ։ Այդ միջոցով քրիստոնեային աջողվում էր ոչ միայն գոյութիւն պահպանել, այլ եւ ազդեցիկ դիրք ստեղծել իր հաւատակիցների մէջ։ Կազմվում է քրիստոնեայ իշխանաւորի ընդհանրապէս զզուելի տիպը. դա փողի, հարստութեան մարդն է, որ առաջ է գնում կաշառքներով, վաչխառութեամբ։ Մի կատարեալ ստրուկ իրանից բարձրի, այսինքն մահմեդականի առաջ, նա դառնում է անգութ հարստահարիչ իրանից ստորի, այսինքն քրիստոնեայի համար։ Նա ունի մի յայտնի դիրք մահմեդական ազդեցիկ պաշտօնեաների մօտ, կարողանում է երբեմն շտկել քրիստոնեայ համայնքի գործերը իր շողոքորթութիւններով, կաշառքներով. բայց դրա փոխարէն նա դրաւում է ռայեայի մէջ մի տեսակ փաշայի, հրամայողի եւ առնողի դեր։ Այդ դասակարգից առաջ եկաւ հայ ամիրայութիւնը Թիւրքիայում։ Անողորմ էին մանաւանդ այն քրիստոնեաները, որոնք կապալով վերցնում էին պետական հարկերը. նրանք մէկին երկու էին առնում ժողովրդից։

Սակայն Թաթարական սիստեմը ոչ մի դասակարգի վրա այնքան անբարոյականացնող ազդեցութիւն չարաւ, ինչպէս հոգեւորականութեան վրա։ Տիրողները շատ լաւ հասկացել էին, թէ ինչպէս կարելի է շահագործել այդ դասակարգի շահամոլութիւնը։ Աթոռ եւ իշխանութիւն փողով գնելը քրիստոնեայ հոգեւորականի տենչանքն էր կազմում։ Այն սեւ ու ողբալի ժամանակներում հոգեւորականների կոչումները, ստոր արարմունքները իշխանութիւն ձեռք բերելու համար՝ մեր պատմութեան երկար էջերն են գրաւում։ Որքան բարձր էր իշխանութիւնը, այնքան սաստիկ էր նրա համար մղվող կռիւը փառասէր եկեղեցականների մէջ։ Հակառակորդները մատնում էին միմեանց, կողոպտում էին եկեղեցիները՝ այս կամ այն բռնաւորին կաշառքներ տալու եւ նրա բարեհաճութիւնը գրաւելու համար, խոստանում էին հարկ տալ եւ ստորանում էին այն աստիճան, որ տիրողները սովորում էին առանց քաշվելու ամեն տեսակ կեղեքումների ենթարկել նրանց։

Այդքան զզուելի արարքների պատճառով էր, որ էջմիածինը, հայոց եկեղեցական իշխանութեան կենտրոնը, մատնվեց մի անտանելի դրութեան եւ հազիւ հազ էր կարողանում շունչ քաշել։ Ի հարկէ, չէ կարելի ասել, թէ բոլոր հոգեւորականներն էին փառամոլ, թէ ամենքն էին պատրաստ զոհել ամեն ինչ իրանց անձնական շահերին։ Բայց փոքր ի շատէ պարտաճանաչ մարդը չէր կարող դրստել այն, ինչ քանդում էին կաշառքներով եւ մատնութիւններով գործ աջողացնողները։ Կաթողիկոսներից անդադար պահանջում էին հարկ, կաշառք. էջմիածինը չունէր եւ դիմում էր ժողովրդին, նրանից ստացած նուէրներն էր գցում անկուշտ իշխողների կոկորդը։ Բայց ժողովուրդը միշտ չէր կարող այդպիսի հարկ վճարել իր հոգեւոր տէրերի ապահովութեան համար. ինչ դրութեան մէջ էր նա ինքը։ Եւ հոգեւոր վարչութիւնը մի կերպ գոյութիւն պահպանելու համար տոկոսներով պարտք էր վերցնում, կատարում տիրողների պահանջը եւ ապա ինքը դառնում էր պարտատէրերի ստրուկ։ Դրութիւնն այնքան զարհուրելի էր, որ ոչ մի կաթողիկոս յանձն չէր առնում մենակ կառավարել եկեղեցին։ Սովորութիւն դարձաւ, որ կաթողիկոսը մէկին ձեռնադրում էր իր աթոռակից եւ ինքը փախչում էր Էջմիածնից, հէնց որ պարտատէրերի եւ իշխողների պահանջները խաստութեան ծայրայեղ աստիճանին էին հասնում։

Այսպիսի հանգամանքների մէջ, ի հարկէ, որ եւ է մտաւոր գործ արժատ բռնել չէր կարող եւ եղածն էլ պիտի վերջնականապէս չորանար։ XVI դարը իր նախորդից էլ մռայլ ու մութ է. նոյն իսկ մի հատ ժամանակագիր հեղինակ էլ չերեւաց հարիւր տարիների ընթացքում, եւ հայոց գրականութեան պատմութեան մէջ այդ դարը մի բոլորովին սեւ բիծ պիտի ներկայացնէր, եթէ Սիմէոն Ապարանցին չը գրէր մի ոտանաւոր շատ խեղճ աշխատութիւն, այն էլ ոչ թէ ժամանակակից կեանքից, այլ վերցրած Ղազար Փարպեցու պատմութիւնից։ Մտաւոր խաւարի, տգիտութեան չափը ցոյց է տալիս եւ այն, որ նոյն իսկ հայոց լեզուի քերականութիւնը բոլորովին մոռացվել էր, ինչպէս վկայում է Առաքել պատմագիրը *)։

V

Ոչ, Հայաստանի հողի վրա չէր կարող ծաղկել գրական եւ մտաւոր շարժում։ Սա մի ճակատագրական վճիռ էր, որ պատմութիւնը հանում էր Թաթարական տիրապետութեան իրականութիւնից։ Տպարանի տեղ չէր մի երկիր, որ այնքան հեռու էր լուսաւոր աշխարհից, այնքան մոռացված, զուրկ հաղորդակցութեան ճանապարհներից եւ ամեն տեսակ ապահովութիւնից, մի երկիր, որի ժողովուրդը գերմարդկային ջանքեր էր անում իր գոյութիւնը պահպանելու համար, եւ արիւնարբու ցեղերից ոտնակոխ եղած, զինուորական բռնապետութիւնների ահաւոր ձեռքի տակ ճնշված՝ տգէտ էր, նախապաշարված ու խաւար։

Բայց այդ ժողովրդի համար եթէ կար ապագայ, եթէ պահվում էր բախտի ժպիտ—դա միայն լուսաւորութիւնն էր, սեփական ջանքերով, առանց որ եւ է կողմնակի օգնութեան առաջադէմ ազգերի ետեւից գնալն էր։ Ի՞նչպէս պիտի հնարաւոր դառնար մի այդպիսի մեծ գործ, երբ թւում էր, թէ հայ ժողովուրդը, իրան չրջապատող պայմանների չնորհիւ, պիտի լինէր ասիական խաւարի մէջ անշարժացած, լոյսից զուրկ մի ժողովուրդ, ինչպէս էին նրա հարեւանները։

Կան չարիքներ մարդկութեան կեանքի մէջ, որոնցից բարիք էլ է ծնվում։ Այդպիսի մի բարիք էլ հայերի համար ծնվեց։

*) Нофаль—„Мусульманское право“, вып. I.

*) Գլ. ԻԹ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Քրիստոնեայի անձնաւորութեան ստորացումը կատարեալ դարձնելու համար մահմեդական օրէնսդրութիւնը ասում էր, որ նոյն իսկ քրիստոնեայ թագաւորը իրաւունք չունի դատարանում վկայութիւն տալ վերջին բռնակիր մուսիւլմանի դէմ *)։ Դա նշանակում էր, որ թաթարական գիշատիչ ցեղերի լուծի տակ ապրող քրիստոնեաների համար վերին աստիճանի դժուար, համարեա միանգամայն անհնարին բան պիտի լինէր որ եւ է դատ վարել մահմեդականի դէմ։ Եւ կար արդեօք թաթարական արդարադատութիւն, երբ կաշառակերութիւնը սրբագործված սովորութիւն էր ոչ միայն մանր-մունր պաշտօնեաների, այլ նոյն իսկ սուլթանների եւ շահերի համար։ Սրբագործված սովորութիւն էր նաեւ այն, որ տիրողը առանց պատճառի անգամ սպանել էր տալիս ունեւորին եւ յափշտակում էր նրա ստացուածքը։ Անհուն կամայականութիւնների թագաւորութիւն էր։ Եթէ մեծ վէզիրներն անգամ ապահով չէին, թէ վաղը միւս օրը կենդանի կը մնան, ինչ կարող էր լինել ռայեան, որի վերաբերմամբ ոչ մի բռնութիւն, ոչ մի անարդարութիւն արգելված չէր։

Բայց այդ դրութեան մէջ էլ գոյութեան կռւի օրէնքը տիրում էր ռայեայի վրա իր բոլոր անողոք պահանջներով։ Գոյութիւն պահպանել կարելի էր ստրուկին տուած զէնքերով. եւ քծնելը, շողոքորթութիւնը, ստախօսութիւնը, մատնութիւնը ու այլ այսպիսի բարոյական կեղտեր ծծվում էին ժողովրդի արեան մէջ, առաւելապէս քաղաքներում ապրող ժողովրդի, որ աւելի յաճախ էր չփվում տիրողների հետ։ Այդ միջոցով քրիստոնեային աջողվում էր ոչ միայն գոյութիւն պահպանել, այլ եւ ազդեցիկ դիրք ստեղծել իր հաւատակիցների մէջ։ Կազմվում է քրիստոնեայ իշխանաւորի ընդհանրապէս զզուելի տիպը. դա փողի, հարստութեան մարդն է, որ առաջ է գնում կաշառքներով, վաչխառութեամբ։ Մի կատարեալ ստրուկ իրանից բարձրի, այսինքն մահմեդականի առաջ, նա դառնում է անգութ հարստահարիչ իրանից ստորի, այսինքն քրիստոնեայի համար։ Նա ունի մի յայտնի դիրք մահմեդական ազդեցիկ պաշտօնեաների մօտ, կարողանում է երբեմն շտկել քրիստոնեայ համայնքի գործերը իր շողոքորթութիւններով, կաշառքներով. բայց դրա փոխարէն նա դրաւում է ռայեայի մէջ մի տեսակ փաշայի, հրամայողի եւ առնողի դեր։ Այդ դասակարգից առաջ եկաւ հայ ամիրայութիւնը Թիւրքիայում։ Անողորմ էին մանաւանդ այն քրիստոնեաները, որոնք կապալով վերցնում էին պետական հարկերը. նրանք մէկին երկու էին առնում ժողովրդից։

Սակայն Թաթարական սիստեմը ոչ մի դասակարգի վրա այնքան անբարոյականացնող ազդեցութիւն չարաւ, ինչպէս հոգեւորականութեան վրա։ Տիրողները շատ լաւ հասկացել էին, թէ ինչպէս կարելի է շահագործել այդ դասակարգի շահամոլութիւնը։ Աթոռ եւ իշխանութիւն փողով գնելը քրիստոնեայ հոգեւորականի տենչանքն էր կազմում։ Այն սեւ ու ողբալի ժամանակներում հոգեւորականների կոչումները, ստոր արարմունքները իշխանութիւն ձեռք բերելու համար՝ մեր պատմութեան երկար էջերն են գրաւում։ Որքան բարձր էր իշխանութիւնը, այնքան սաստիկ էր նրա համար մղվող կռիւը փառասէր եկեղեցականների մէջ։ Հակառակորդները մատնում էին միմեանց, կողոպտում էին եկեղեցիները՝ այս կամ այն բռնաւորին կաշառքներ տալու եւ նրա բարեհաճութիւնը գրաւելու համար, խոստանում էին հարկ տալ եւ ստորանում էին այն աստիճան, որ տիրողները սովորում էին առանց քաշվելու ամեն տեսակ կեղեքումների ենթարկել նրանց։

Այդքան զզուելի արարքների պատճառով էր, որ էջմիածինը, հայոց եկեղեցական իշխանութեան կենտրոնը, մատնվեց մի անտանելի դրութեան եւ հազիւ հազ էր կարողանում շունչ քաշել։ Ի հարկէ, չէ կարելի ասել, թէ բոլոր հոգեւորականներն էին փառամոլ, թէ ամենքն էին պատրաստ զոհել ամեն ինչ իրանց անձնական շահերին։ Բայց փոքր ի շատէ պարտաճանաչ մարդը չէր կարող դրստել այն, ինչ քանդում էին կաշառքներով եւ մատնութիւններով գործ աջողացնողները։ Կաթողիկոսներից անդադար պահանջում էին հարկ, կաշառք. էջմիածինը չունէր եւ դիմում էր ժողովրդին, նրանից ստացած նուէրներն էր գցում անկուշտ իշխողների կոկորդը։ Բայց ժողովուրդը միշտ չէր կարող այդպիսի հարկ վճարել իր հոգեւոր տէրերի ապահովութեան համար. ինչ դրութեան մէջ էր նա ինքը։ Եւ հոգեւոր վարչութիւնը մի կերպ գոյութիւն պահպանելու համար տոկոսներով պարտք էր վերցնում, կատարում տիրողների պահանջը եւ ապա ինքը դառնում էր պարտատէրերի ստրուկ։ Դրութիւնն այնքան զարհուրելի էր, որ ոչ մի կաթողիկոս յանձն չէր առնում մենակ կառավարել եկեղեցին։ Սովորութիւն դարձաւ, որ կաթողիկոսը մէկին ձեռնադրում էր իր աթոռակից եւ ինքը փախչում էր Էջմիածնից, հէնց որ պարտատէրերի եւ իշխողների պահանջները խաստութեան ծայրայեղ աստիճանին էին հասնում։

Այսպիսի հանգամանքների մէջ, ի հարկէ, որ եւ է մտաւոր գործ արժատ բռնել չէր կարող եւ եղածն էլ պիտի վերջնականապէս չորանար։ XVI դարը իր նախորդից էլ մռայլ ու մութ է. նոյն իսկ մի հատ ժամանակագիր հեղինակ էլ չերեւաց հարիւր տարիների ընթացքում, եւ հայոց գրականութեան պատմութեան մէջ այդ դարը մի բոլորովին սեւ բիծ պիտի ներկայացնէր, եթէ Սիմէոն Ապարանցին չը գրէր մի ոտանաւոր շատ խեղճ աշխատութիւն, այն էլ ոչ թէ ժամանակակից կեանքից, այլ վերցրած Ղազար Փարպեցու պատմութիւնից։ Մտաւոր խաւարի, տգիտութեան չափը ցոյց է տալիս եւ այն, որ նոյն իսկ հայոց լեզուի քերականութիւնը բոլորովին մոռացվել էր, ինչպէս վկայում է Առաքել պատմագիրը *)։

V

Ոչ, Հայաստանի հողի վրա չէր կարող ծաղկել գրական եւ մտաւոր շարժում։ Սա մի ճակատագրական վճիռ էր, որ պատմութիւնը հանում էր թաթարական տիրապետութեան իրականութիւնից։ Տպարանի տեղ չէր մի երկիր, որ այնքան հեռու էր լուսաւոր աշխարհից, այնքան մոռացված, զուրկ հաղորդակցութեան ճանապարհներից եւ ամեն տեսակ ապահովութիւնից, մի երկիր, որի ժողովուրդը գերմարդկային ջանքեր էր անում իր գոյութիւնը պահպանելու համար, եւ արիւնարբու ցեղերից ոտնակոխ եղած, զինուորական բռնապետութիւնների ահաւոր ձեռքի տակ ճնշված՝ տգէտ էր, նախապաշարված ու խաւար։

Բայց այդ ժողովրդի համար եթէ կար ապագայ, եթէ պահվում էր բախտի ժպիտ—դա միայն լուսաւորութիւնն էր, սեփական ջանքերով, առանց որ եւ է կողմնակի օգնութեան առաջադէմ ազգերի ետեւից գնալն էր։ Ի՞նչպէս պիտի հնարաւոր դառնար մի այդպիսի մեծ գործ, երբ թւում էր, թէ հայ ժողովուրդը, իրան չրջապատող պայմանների չնորհիւ, պիտի լինէր ասիական խաւարի մէջ անշարժացած, լոյսից զուրկ մի ժողովուրդ, ինչպէս էին նրա հարեւանները։

Կան չարիքներ մարդկութեան կեանքի մէջ, որոնցից բարիք էլ է ծնվում։ Այդպիսի մի բարիք էլ հայերի համար ծնվեց։

*) Գլ. ԻԹ.

եթէ ոչ զոհեր տղամարդկանց վաւաշոտ բռնակալութեան, զոհեր, որոնք աւելի կարեկցութեան են արժանի, քան արհամարհանքի։

Արհամարհել եւ ատել պէտք է ոչ թէ զոհերին, այլ զոհողներին, եւ, եթէ կամենում էք, ոչ այնքան զոհողներին, որքան այն պայմանները, որոնք ծնեցնում են եւ թոյլ են տալիս այդպիսի երեւոյթներ։

Այդ պայմանների մէջն է հարցի էութիւնը, եւ դրանց դէմ պէտք է կուռն նրանք, որոնց թանգ է զոհերի վիճակը։

«Համբերողութիւն դէպի մարդիկ, եւ անհամբերողութիւն դէպի սկզբունքները»—ահա ինչ է ցանկալին։

Տ. Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, մայիսի 28-ին

«Մշակ» լրագիրը իր 56 համարում Շուշուց հաղորդված հրատարակել է ինձ դէմ մի լուր եւ ընթերցողներին մոլորութեան մէջ գցել, որ ստիպված եմ երկրորդում հերքել եւ ճշմարտութիւնը ներկայացնել։ Լրատուն ի զուր ճգնում է իմ անուանս ստուեր գցել եւ հիմնովին ստեր հաղորդելով նկարագրել, որ «Մեղրեցւոց եկեղեցու ժողովուրդը կեղեքվում է մի խառնակութիւնից», որի հեղինակը, որպէս թէ. «ժողովուրդը չէ կամենում, բայց ինքիգներով, խռովութիւններով ուզում են մի կերպ դրստել այդ բանը, այսինքն ուզում են մեծամասնութեան ձայնը խեղդել եւ պատրաստվում է բողոք, թէեւ բողոքների գինն էլ պարզված է միանգամայն»։ Թէ ինչու լրատուն յերիւրել է այս տեսակ հիմնովին ստերը, երբ իմ եւ մեղրեցւոց ժողովրդականների մէջ ոչ մի խօսք չէ փոխանակված, նրանց եկեղեցին գնալու կամ չը գնալու համար, հասկանալի է։ Նա ունեցել է միայն նպատակ անպատուելու ինձ, անուանարկելու հոգեւոր իշխանութեանը եւ գրգռելու ժողովրդի պարզ միտքը։

Սկզբունք առնելով այն խնդիրը, որ Շուշու այժմեան բոլոր քահանաների գրեթէ կէս մասը ձեռնադրված են զանազան տեղերի վրա եւ ապա փոխադրված Շուշի, ես էլ խնդրեցի Վեհափառ Հայրապետից ինձ էլ փոխադրել, աչքի առաջ ունենալով Խանքենդու իմ անապահով վիճակն, որի մասին անցեալներում քանիցս գրվեցաւ «Մշակում»։ Վեհափառ Հայրապետը իմ խնդրին մակագրել է. «Ըստ ցանկութեան ժողովրդականաց փոխադրել»։ Այս խօսքերից պարզապէս յայտնի է, որ ոչ մի եկեղեցի չէ որոշված, այլ թէ որոնք կը ցանկանան, լինի մեղրեցւոց, թէ միւսներին մի եւ նոյն է։ Բայց թէ ինչպէս եղաւ, որ լրատուի հաղորդած երեւակայական խառնակութիւնները եւ բողոքը յանկարծ յարութիւն առան մեղրեցւոց ժողովրդականների մէջ, այսպէս է եղել։ Վեհափառի մակագիրը ստանալով՝ Շուշու կօնսիստորիականները, ափ ի բերան աշխատեցին խռովութեան սերմը գցել մեղրեցւոց ժողովրդականների մէջ, որպէս թէ խանգարելու իմ քաղաք փոխադրվելու խնդիրը։ Խնդիրը գրված տրվում է մեղրեցւոց եկեղեցու երէցփոխին եւ հարկադրվում ստորագրութիւններ ժողովելու, բայց նա տեսնելով, որ իմ կողմից իրանց եկեղեցին գնալու հարց չէ դրված, թողնում է ստորագրութիւններ ժողովելու խնդիրը։ Զուտ իրողութիւնն այս է։ Կայ որանում իմ կողմից ձգված լրատուի յիշած «կեղեքելու խառնակութիւնը, ինարիգ եւ ժողովրդի ձայնի խեղդու

», կամ ժողովրդի պատրաստած «բողոքն» այս է, դատողութիւնը թողնում եմ ընթերցողին անելու։

Դարձեալ նոյն լրագիրը իր 81 համարում Խանքենդուց ինձ դէմ մի նամակ է հրատարակել, որ նոյնպէս հիմնովին սխալ է։

Պ. Գասպար Յովսէփեանցը Խանքենդում առեւտրական ոչ մի գործ չունի։ Նա Օտարեանցի Ջրաղացապանն է եւ ստացած ցորենները աղալով՝ տիրոջն է յանձնում։ Նա ինձանից երբէք սրբութիւն չէ խնդրած, այդ կատարեալ սխալ է, բայի այս անցեալ մեծի պահոց օրերի առաջի կիրակին, որ եւ է ժողովրդականների շարքում, բոլորի աչքի առաջ, ինքն էլ սրբութիւն է առած, իսկ թէ ինչու այժմ հրապարակաւ, աշխարհին զարմացնելով՝ ուրանում է. մեթէ արդարեւ այդքան հեշտ բան է հաղորդութիւն առնելը եւ ուրանալը։ Յաւալի բան։ Այդ դեռ բաւական չէ եւ նա իր այդ ուրացութեամբ վստահանում է «պատկերացնել մեր տէրտէրների անուղղելի արարքները»։ Որպիսի տգիտութիւն։ Դենք թէ ես աչքի առաջ ունենալով նրա, պ. Յովսէփեանցի, մի քանի խոշոր պակասութիւնները, նրան խրատելու եւ կարգի հրաւիրելու համար հրաժարվել եմ հաղորդութիւն տալուց, իսկ մեր միւս տէրտէրներն ինչով են մեղաւոր։ Եւ նա այսպէս իր ագիտութիւնը աշխարհին ցոյց տալուց յետոյ, իմ գործողութիւրները, առանց փաստերը եւ «Մշակի» համարները յիշելու, յայտնի է կացուցամում «Մշակի» ընթերցողներին։

Նրանից աւելին սպասել դժուար է, որովհետեւ Ջրաղացից դուրս աշխարհ չէ տեսել, ապա թէ ոչ՝ ով կարող է սրբութիւն առնել եւ հրապարակաւ ասել՝ թէ չեմ առել։ Պարզ է, որ նա սրբութեան մասին հասկացողութիւն անգամ չունի։

Պետրոս քահ. Տէր-Յովհաննիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի, յուլիսի 6-ին, Կովկասի Կառավարչապետ իշխան Գոլիցին իր ամուսնու հետ միասին ուղեւորվեց Թիֆլիսից դէպի հիւսիսային Կովկասի հանքային ջրերը։ Պ. Կառավարչապետին ճանապարհ դցելու համար պալատում հաւաքվել էին Թիֆլիսի բարձրաստիճան ծառայողները։

—

Կովկասեան ցուցահանդէսի խնդրի վերաբերութեամբ՝ գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը որոշեց ներկայացնել ցուցահանդէս կազմելու համար անհրաժեշտ ծախքերի նախահաշիւը եւ տեղեկանալ, թէ որքան կարող է մինիստրութիւնը նշանակել այդ գործի համար։

—

Տնայնագործութեան արհեստը զարգացնելու նպատակով մայրաքաղաքում հիմնված է մի յատուկ թանգարան, որի նպատակը պէտք է լինի ծանօթացնել հետաքրքրվողներին այդ արհեստի վիճակի հետ Ռուսաստանի զանազան մասերում եւ նպաստել նրա զարգացմանը։ Թանգարանում կը լինեն իւրաքանչիւր արհեստի վերաբերեալ արդիւնքների կատարելագործված նմուշներ եւ գործնականապէս ցոյց կը տրվեն այն տեխնիկական եղանակները, որոնցով կարելի է կատարելագործել արդիւնքները։ Թանգարանը պէտք է նոյնպէս նպաստէ վաճառահանելու տնայնագործական արդիւնքները, նոր վաճառանոցներ բանալու նրանց համար, նմուշներ ուղարկելու զանազան տեղեր։ Թանգարանում պէտք է մշտապէս գործեն մասնագէտներ՝ խորհուրդներ եւ ցուցումներ տալու ցանկացողներին։ Թանգարանը կը գտնվի երկրագործութեան մինիստրութեան հսկողութեան տակ եւ կը կազմէ այժմ գոյութիւն ունեցող գիւղատնտեսական թանգարանի մի անկախ բաժինը։

—

Մենք հաղորդել էինք այն անձանց անունները, որոնք հաստատված են հոգաբարձուներ Անանեան-Մարիամեան դպրոցի համար։ Կովկասեան ուսումնական շրջանը, ինչպէս հաղորդում է «Тифлисскій Листокъ» լրագիրը, հաստատել է հոգաբարձական պաշտօնի մէջ նաեւ Ա. Յովհաննիսեանին, որ ընտրված էր պատգամաւորների կողմից իբրեւ հոգաբարձական թեկնածու։ Այդպիսով ներկայումս բոլոր հոգաբարձուները հաստատված են եւ Մարիամեան-Անանեան դպրոցի հոգաբարձական կազմը լիակատար է։

—

Թիֆլիսի թիւրքաց հիւպատոսը խնդում է մեզ տպագրել հետեւեալը. «Վիեննայի «Neue Freie Presse» լրագրի հաղորդած մի լուրը, որ տպված է «Մշակի» № 106-ի մէջ, որպէս թէ իշխանուհի Սենիա ծպտեալ փախել էր ուզում, բայց այդ բանը խմացվեց եւ իշխանուհին ենթարկվեց հսկողութեան։ Այդ լուրը միանգամայն մտացածին է եւ կարելի է համարել ֆանտաստիական»։

Յուլիսի 4-ին լրացաւ Մոսկվայում հիմնված տպագրական գործողների փոխադարձ օգնող ընկերութեան եռամեակը։ Ընկերութեան անդամները այժմ վճռել են բանալ յատուկ կլուբ, որտեղ իրանց ընտանիքները կարողանային տեսակցել եւ ստանալ զանազան զուարճութիւններ։

—

Ստայանք Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան ձեռքով լոյս ընծայված հանգուցեալ՝ Յ. Պարոնեանի «Հոսոսի ձեռատետր» գիրքը, որի մէջ մտել են նոյն հեղինակի «Պլոտոյտ մը Պօլսոյ թաղերուն մէջ» եւ «Խիկարի գուշակութիւնք» աշխատութիւնները։ Գրքի մէջ զետեղված է հեղինակի պատկերը։ Ներկայ տպագրութիւնը երկրորդն է։

—

Կովկասի պ. Կառավարչապետը, ինչպէս լսել է «Кавказъ»-ը, հաստատել է արդէն Թիֆլիսի քաղաքային խորհրդի որոշումը, որով ինժեներ Բօբիին իրաւունք է տրվում լեռնային երկաթուղի չինելու դէպի ս. Դաւթի գլուխը։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ գաւառից մեզ գրում են հետեւեալը։ «Գարու ցանքսերի վրա երեւացած բզէզը մեծ աւերումներ է անում։ Նա զգալի վնասներ է հասցրել Վաչիան, Զանդուրա, Գիւմուրդա, Դիլիսկա, Խոսպիա, Կուլիկամ, Մաջադիա եւ Կօրի գիւղերի ցանքսերին։ Գիւղացիները հաւաքեցին բզէզի մի որոշ քանակութիւն եւ ներկայացրին գաւառապետին, խնդրելով աջակցութիւն մոքառելու վնասակար միջատի դէմ։ Վաչիանի հասարակութիւնը, չը տեսնելով օգնութեան ուրիշ միջոց, վճռել է բերել տալ Ալէքսանդրոպոլից եւ թնվիրաց Աստուածածնի պատկերը։ Ով գիտէ իսկական միջոցներ, թող մատնացոյց անէ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Չինաստանում ներկայումս կատարվող անցքերի մէջ ամենանշանաւոր դերերից մէկը կատարում է պրինց Տուան, ուստի աւելորդ չենք համարում յիշատակել այն տեղեկութիւնները, որ Տէօ Զէէլման հաղորդում է նրա մասին «Berliner Tageblatt» լրագրում։

«Պրինց Տուան, ասում է նա, հառակաւոր մարդ է, նրա տարիքը 30-ից անց են։ Նա մանջուրի իսկական տիպար է, նեղ ճակատով, բայց գանգի սաստիկ դուրս ընկած ոսկրներով։ Ժողովրդի եւ բնիների նօսր մազերով ու գունատ դէմքի փոքր ինչ հիւանդոտ արտայայտութեամբ։ Առաջին անգամ Տուան թողնում է աւելի գիտնականի, քան գործող մարդու տպաւորութիւն, որ այդտեղի սակաւաթիւ, թերուս գրական գործիչներից գնային Եւրոպա, տպարանի ետեւից։

1562 թուականին Միքայէլ կաթողիկոսը թողնելով Էջմիածնում իր աթոռակցին, գնաց Սերաստիա՝ մայր աթոռի ցաւերից մի քիչ ազատվելու համար։ Այդտեղ նա ծանօթացաւ եւդոկիացի (Թոխաթցի) Աբգար անունով դպրի հետ եւ նրան ու մի վարդապետի պատգամաւոր ուղարկեց Հռոմ։ Ինչպէս երեւում է, հայոց կաթողիկոսը վճռել էր ժողովրդի փրկութեան գործին զոհ բերել եկեղեցու գաւանական խորութիւնը, եւ Աբգարի պատգամաւորութիւնն ունէր քաղաքական նպատակ։ Պապին գրած նամակի մէջ Միքայէլ կաթողիկոսը առաջարկում էր լինել «մի հօտ, մի հովիւ, որպէս զի դրա հետ կարելի լինի աչք դնել գերութիւնից ազատվելու վրա», ի հարկէ, պապի օգնութեամբ *)։

Հայերի այս պատգամաւորութեան մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդողներ հռոմէական աղբիւրներն են, որոնք եւ ասում են, թէ հայոց կաթողիկոսի թղթի մէջ կային ծածկագրութիւններ եւ նշաններ, որոնց բացատրութիւնը միայն Աբգարը կարող էր տալ։ Սա աւելի եւս հաստատում է այդ պատգամաւորութեան քաղաքական հանգամանքը։ Եթէ հարցը պարզապէս կրօնական լինէր, հարկ չէ լինի դիմելու ծածկագրութեան։ Երեւի այդտեղ թաքցրված էին այն պայմանները, որ Միքայէլ կաթողիկոսը առաջարկում էր Հռոմին, պայմաններ, որոնք չէին կարող խիստ գաղտնիք չը լինել։ Խնդիրը, ինչպէս երեւում է, դրված էր կտրուկ կերպով. եթէ Հռոմի պապերը կարողանային ազատել հայերին սոսկալի գերութիւնից, այն ժամանակ եկեղեցիների միութիւնը կատարված բան կը լինէր։

(Կը շարունակվի)

*) Զամչեան, Պատմ. Հայ., Գ., եր. 520։

Անչուշտ Հայաստանի համար մեծ դժբախտութիւն էր, որ կռռորածների դարերում ահագին բազմութեամբ հայեր հեռանում էին դէպի աշխարհի զանազան կողմերը՝ բախտ եւ հանգստութիւն որոնելու։ Ժամանակի ընթացքում գոյացաւ մի օտարերկրեայ Հայաստան—եթէ ներելի կը լինի այսպիսի մի անուն յատկացնել միմեանցից ահագին տարածութիւններով անջատված մանր ու խոշոր գաղթականութիւններին։ Սրանց մի խիտ ցանցը տարածված էր նախ եւ առաջ Հայաստանի մօտ գտնվող, նոյն իսկ սահմանակից երկիրներում։ Միջերկրական ծովի ասիական, եւրոպական եւ մասամբ աֆրիկեան ափերը, Սեւ ծովի նաւահանգիստները, Վրաստանը, Պարսկաստանը, Հընդկաստանը բազմաթիւ գաղթավայրեր տուին իր երկրից կամայ թէ ակամայ հեռացող հային։ Յաւիտեան կտրվելով հայրենի հողից, նա սկսեց արհամարհել տարածութիւնները եւ հասաւ Վոլգայի ափերին, մտաւ Ղրիմ, Լեհաստան, Տրանսիլվանիա, Բուկովինա, Մոլդաւո-Վալախիա։ Իտալիայի, Ֆրանսիայի, Սպանիայի, Անգլիայի, Հոլանդիայի, ինչպէս նաեւ Հնդկական կղզիների եւ նոյն իսկ Չինաստանի նաւահանգիստները անծանօթ չէին հայերին։ Նրանք մեծ ընդունակութիւն ցոյց տուին զանազան կողմեր ցրվելու, ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն հաստատելու եւ օտար կեանքի պայմաններին յարմարվելու մէջ։ Նոյն իսկ Կովկասեան լեռնաշղթայի մշուշապատ լանջերը չը խուսափեցին գաղթավայր որոնող հայի աչքից, եւ այդտեղ, չերքէզների երկրում, տպաստան գտաւ հայկական մի փոքրիկ հատուած։ Աշխարհի վրա գուցէ միայն հրէաներն են գաղթական հայութիւնից անհամեմատ շատ քարէքար ընկել։

Դա չարիք էր այն տեսակէտից, որ անչափ նուազեցնում էր հայութեան թիւը։ Օտար երկրների տակ ցաք ու ցրիւ եղած հայ ժողովուրդը բնականաբար պիտի կորչէր։ Մի վաճառական ժողովուրդ, փոքրիկ համայնքներով խըրված օտար ազգութիւնների ծոցը, երկար ժամանակ չէր կարող պահպանել ազգային ինքնուրոյնութիւն, մանաւանդ որ համարեա ոչինչ կապ չէր պահպանում բուն հայրենիքի հետ, չէր ենթարկվում հայրենի հողի ազդեցութեան, չէր ստանում այդտեղից այնպիսի մտաւոր պաշար, որ բաւարարութիւն տար նրա կեանքի պահանջներին։ Կամ բոլորովին կորցնելով իրանց մայրենի լեզուն, կամ պահելով այդ լեզուն լոկ եկեղեցական ծէսերի համար՝ հայ գաղթականութիւններից շատերը ձիւնի պէս հալվում էին, բոլորովին օտարանում եւ կուլ գնում իրանց շրջապատող ազգութիւնների մէջ։ Թէեւ այսպէս, բայց գաղթականութիւններին էր վերապահված լոյս վառել իրանց դժբախտ հայրենիքի համար։

Ի՞նչ էր տալիս գաղթականութիւնը։—Ամենից առաջ այն, որ հայը իր երկրի սահմաններում կղզիացած չէր մնում։ Գաղթելով, նա հեռանում էր իր տխուր իրականութիւնից եւ մտնում էր քաղաքակրթութեամբ երջանիկ աշխարհին. այդտեղ նա տեսնում եւ սովորում էր շատ բան, կուլտուրական եռանդ, ձեռնարկող, մրցող ոգի էր ցոյց տալիս։ Իբրեւ ճարպիկ ու ժիր վաճառական, նա միջնորդ էր հանդիսանում Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ, նրա կարաւանները անհուն տարածութիւն էին կտրում, փոխադրելով մի երկրի բերքերը ուրիշ երկիրներ։ Դժուարութիւններ արհամարհելը, համբերատարութիւնը, չարքաշութիւնը, յաճառ կերպով նպատակին ձգտելը բնաւորութեան խոշոր գծեր էին կազմում։ Հայը կայաններ ունէր Եւրոպայի եւ Ասիայի ամենանշանաւոր կենտրոններում. այդ կայանները միայն վաճառականական շահին չէին ծառայում, այլ եւ երբեմն մտաւոր գործի օջախներ էին հանդիսանում։ Վաճառականի հետ գաղթականութեան ճանապարհին մի մի երեւան էր գալիս նաեւ գրագէտը, ուսման տենչով վառված հայը...

Հետեւելով հայ գաղթականի գծած ճանապարհներին, տեսնելով թէ ինչպէս սկսվեցան նրանք եւ ուր էին տանում, մարդուն այնպէս է թւում, թէ ճակատագիրը դարերի ընթացքում այնքան մեծ բազմութիւններ էր խլում հայի երկրից, որպէս զի ապագայում այդ բազմութիւններից մնացած փշրանքների միջոցով նոր բախտ վերադարձնէ հային—լոյս եւ քաղաքակրթութիւն որոնող մի ազգի բախտը։ Դարաւոր հանգամանքները մշակեցին մի հաստատ, տեւողական օրէնք.—հայը իր գաղթականութիւնների մէջ պիտի ձեռք բերէր վերածնութեան համար անհրաժեշտ լոյսն ու իմաստականութիւնը եւ ապա կամայ կամաց, փոքր չափերով, փոխադրէր այդ ստացուածքը դէպի բուն հայրենիքը։ Ուրիշ միջոց եւ ճանապարհ չէր թոյլ տալիս հայի իրականութիւնը։ Եւ մինչեւ այժմ էլ գործում է այդ օրէնքը. մինչեւ այժմ էլ գաղթականութիւնների մէջ է կենտրոնացած հայի մտաւոր եւ կուլտուրական կեանքը։ Առանց գաղթականութիւնների՝ Հայաստանը կը մնար նոյնը, ինչ էր տասնեակ դարեր առաջ։

VI

Հայերէն տպագրութեան սկզբնաւորութիւնը անհաստատ էր։ 1513-ից յետոյ գալիս է մի երկարատեւ անգործութիւն, որ 50 տարուց աւել է տեւում. այդ ժամանակամիջոցում, որքան յայտնի է, հայերէն գրքեր չը տպագրվեցան։ Եւրոպան տուել էր հայերին տպագրական տառեր, բայց Եւրոպան չէր կարող գրքերի հրատարակութիւններ կատարել շարունակ։ Հայոց գրականութիւնը այնտեղ անյայտ էր եւ, ուրեմն, պէտք էր որ հայերը իրանք տեսնէին իրանց հոգսը։ Եւրոպայում գտնվող հայ գաղթականութիւնները շատ քիչ էին հետաքրքրվում հայերէնով. նրանք չունէին պատրաստված, հասկացող մարդիկ, որոնք ըմբռնէին ազգային գրականութեան օգուտը եւ շարունակէին օտարների սկսած տպարանական գործը։ Մնում էր, որ Հայաստանը իր թշուառութիւնների մէջ մտածէր նաեւ մասնաւոր մասին։ Մնում էր, որ այդտեղի սակաւաթիւ, թերուս գրական գործիչներից գնային Եւրոպա, տպարանի ետեւից։

1562 թուականին Միքայէլ կաթողիկոսը թողնելով Էջմիածնում իր աթոռակցին, գնաց Սերաստիա՝ մայր աթոռի ցաւերից մի քիչ ազատվելու համար։ Այդտեղ նա ծանօթացաւ եւդոկիացի (Թոխաթցի) Աբգար անունով դպրի հետ եւ նրան ու մի վարդապետի պատգամաւոր ուղարկեց Հռոմ։ Ինչպէս երեւում է, հայոց կաթողիկոսը վճռել էր ժողովրդի փրկութեան գործին զոհ բերել եկեղեցու դաւանական խորութիւնը, եւ Աբգարի պատգամաւորութիւնն ունէր քաղաքական նպատակ։ Պապին գրած նամակի մէջ Միքայէլ կաթողիկոսը առաջարկում էր լինել «մի հօտ, մի հովիւ, որպէս զի դրա հետ կարելի լինի աչք դնել գերութիւնից ազատվելու վրա», ի հարկէ, պապի օգնութեամբ *)։

Հայերի այս պատգամաւորութեան մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդողներ հռոմէական աղբիւրներն են, որոնք եւ ասում են, թէ հայոց կաթողիկոսի թղթի մէջ կային ծածկագրութիւններ եւ նշաններ, որոնց բացատրութիւնը միայն Աբգարը կարող էր տալ։ Սա աւելի եւս հաստատում է այդ պատգամաւորութեան քաղաքական հանգամանքը։ Եթէ հարցը պարզապէս կրօնական լինէր, հարկ չէ լինի դիմելու ծածկագրութեան։ Երեւի այդտեղ թաքցրված էին այն պայմանները, որ Միքայէլ կաթողիկոսը առաջարկում էր Հռոմին, պայմաններ, որոնք չէին կարող խիստ գաղտնիք չը լինել։ Խնդիրը, ինչպէս երեւում է, դրված էր կտրուկ կերպով. եթէ Հռոմի պապերը կարողանային ազատել հայերին սոսկալի գերութիւնից, այն ժամանակ եկեղեցիների միութիւնը կատարված բան կը լինէր։

(Կը շարունակվի)

*) Զամչեան, Պատմ. Հայ., Գ., եր. 520։

պատուոր թիւն. երբեմնապէս միայն վառվող, համարեա չար հայեացքը, որ նա ձգում է յանկարծ իր գրեթէ միշտ անշարժ աչքերից, նոյնպէս եւ մարմնի վերին մասի մի փոքր կռացած դրութիւնը—կարծես նա, դարան մտած՝ սպասելիս լինի մի մարդու—վկայում են, որ Տուան այնքան էլ անվնաս մարդ չէ, որպէս երեւում է։ Տուանի եւ նրան շրջապատող անձերի առանձին հպարտութեան աստիճան այն փոքրիկ սպին է, որ գտանվում է նրա ձախ քունքի վրա եւ որը, իբր թէ, մնացել է սրի հարուածից՝ 1875 թուին Դունդանների ապստամբութեան ճնշման օրերից։ Պրինց Տուան շատ անարար եւ շատ ինայող մարդ է իր անձի եւ ընտանիքի համար պահանջվող ծախքերում։ Նա չէ սիրում փարթամութիւն եւ առատութեամբ է վերաբերվում դէպի այն առարկաները, որոնք բերվում են Եւրոպայից, եթէ հաշուելու չը լինենք դեղձանիկները... որոնցից նա պահում է մի քանի տասնեակ։ Դրա փոխանակ նա ջերմ երկրպագու է չինական գեղարուեստական արդիւնագործութեան եւ քաջ ծանօթ չինական գրականութեան։

«Տուան բաւական լաւ տեղեակ է եւրոպական գործերին։ Թէպէտ եւ նա խորին կերպով համոզված է, որ չինացի արհեստաւորները բարձր յատկութիւնների տէր են, այսու ամենայնիւ նա գիտէ, որ եւրոպական իրեղէնները շատ բանում գերազանց են չինականից։ Բայց նա վախենում է, որ եւրոպական ապրանքների անսահմանափակ ներմուծումը կարող է չինական արդիւնագործութեան անկման պատճառ դառնալ եւ, որ աւելի նշանաւորն է, կարող է ժողովրդի ահագին բազմութիւնն ազատել այժմեան ճնշված դրութիւնից, երբ Չինաստանում բազմանան գործարանները չինացի բանուորներով եւ եւրոպացի կառավարիչներով։ Տուան ընազդմամբ զգում է, որ այդ նոր կազմակերպվող բանուոր դասակարգը կեանք կը ներշնչէ չինական անտարբեր ժողովրդի անհամար բազմութեան մէջ եւ կը թուլացնէ այն կապերը, որոնցով կաշկանդել է նրան տիրող դասակարգը։ Նա նախագուշակում է նոյնպէս, որ այդ երեւոյթը կարող է կործանել բազմակողմ եւ բազմացեղ պետութիւնը ու թուլացնել մանչուրական թագաւորող տան ազդեցութիւնը։ Եւ այս բանից նա վախենում է առաւել եւս նրա համար, որ չինական այժմեան գահաժառանգը նրա որդին է։

«Տուան շատ թերահաւատութեամբ է վերաբերվում դէպի քրիստոնէական կրօնը եւ նրա, իբր թէ, մեղմացնող ազդեցութիւնը, ժողովրդական բարքերի վրա, որովհետեւ նրան յայտնի է, թէ որպիսի հակասութիւն կայ քրիստոնէական կրօնի տեսական մասի եւ գործադրութեան մէջ։ Նրա հայեացքը այդ հարցի վերաբերմամբ պարզ կերպով երեւում է այն նկատողութիւնից, որ նա արաւ մի այցելուի՝ նրա հետ քրիստոնէական եւ կոնֆուցիական կրօնների մասին խօսելիս. «Ես լսել եմ, ասաց Տուան, որ մեր նաւահանգիստներում մի օրվայ ընթացքում աւելի արբած քրիստոնեաներ կարելի է տեսնել, քան արբած չինացիներ ամբողջ տարվայ ընթացքում»։

Իր դիպլոմատիական գործունէութեամբ Տուան շատ անգամ ապացոյցներ է տուել, որ նշանաւոր ինտրիգան է։ Նա գնում է իր ճանապարհով զգոյշ եւ դանդաղ, շեղվելով երբեմն դէպի աջ եւ երբեմն դէպի ձախ՝ արգելքներն իր ճանապարհից հեռացնելու համար, բայց երբէք աչքից բաց չը թողնելով գլխաւոր նպատակը։ Ոչ մի բան այնպէս լաւ չէ կարող բնորոշել նրա մտածողութեան եղանակը, ինչպէս այն յայտարարութիւնը, որ նա արաւ մի անգլիացի ճարտարապետի, որի հետ նա բանակցութիւններ էր վարում։ «Խուսնջը կը հասնի սարի գագաթը ոչ աւելի վատ, քան եռանդոտ ապրանքատար ձին եւ մի եւ նոյն ժամանակ նա երկիւղ չունի սայթաքելուց եւ սարն ի վայր գլորվելուց»։

«Եւրոպայում սովորաբար այրի կայսրուհուն են համարում Չինաստանի ներկայ խառն դրութեան եւ ռէակցիայի պատճառ։ Բայց իսկապէս նա բոլոր ժամանակ միայն գործիք էր Տուանի ձեռքին։ Իր որդուն գահի վրա տեղ պատրաստելու համար՝ Տուան առաջ համոզեց փառասէր կայսրուհուն գահընկէց անել կայսրին եւ երբ այդ բանը արդէն իրականացած էր, նա սկսեց նախապատրաստութիւններ տեսնել հէնց իրան կայսրուհուն կործանելու համար եւ այդ նպատակով օգուտ քաղեց բռունցքամարտների շարժումից եւ անցաւ նրա գլուխը։ Բռունցքամարտները հարկաւոր էին նրան ոչ միայն անձնական նպատակների, այլ եւ ատելի եւրոպացիների դէմ կռուելու համար»։ Եթէ հաւատ ընծայելու լինենք այն հակասական հեռագիրներին՝ որոնք ստացվեցին մի շաբաթ առաջ, պրինց Տուան արդէն իրան կայսր է հռչակել Պեկինում։

Ընդհակառակը վերջին տեղեկութիւնները, ըստ երեւոյթին, հաստատում են, որ չինական կայսրը կենդանի է։ «Central News» հաղորդում է, թէ կայսրը ոչ միայն կենդանի է, այլ եւ աշխատում է անդործ չը մնալ ներկայ անցքերի ժամանակ։ Նա ամենամեծ ուշադրութեամբ հետեւում է բոլոր անցքերին եւ աշխատում է վերականգնել կարգը՝ որի համար եւ դիմել է պետութիւնների աջակցութեան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Իտալական լրագիրներում երեւում են բազմաթիւ յօդուածներ, որոնք պահանջում են կառավարութիւնից ուժեղացնել նաւատորմը չինական ջրերում եւ աւելի եռանդուն մասնակցութիւն ունենալ չինական գործերում։ «Tribuna» լրագրում նախկին մինիստր-նախագահ Կրիսպի գրում է. «Այժմ խօսքը գաղթականական քաղաքականութեան մասին չէ, որի օգուտը պետութեան համար կարելի է եւ ժխտել, այժմ բանը այն արիւնահեղ խրախճանքն է, որ կատարվում է Չինաստանում. եւ այն բոլոր պետութիւնները, որոնք մասնակից կը լինեն այդ խրախճանքին, բաժանման ժամանակ խոշոր պատառներ կըստանան։ Բայց Իտալիան չէ մասնակցում, ուստի եւ չի ստանայ ոչ մի բաժին, երբ պետութիւնները պատառ-պատառ կանեն Չինաստանը։ Այն ժամանակ մենք կը զղջանք, որ անհեռատես եւ անփորձ գտնվեցինք. բայց թոյլերի արտասուքը չի հարկադրի զօրեղներին նոյն իսկ մի տերեւ բաժին հանել այն դափնիներից, որոնց նրանք կարժանանան»։ Իտալական նախկին մինիստր-նախագահի այս խօսքերը ցոյց են տալիս միայն, թէ որպիսի ցինիկ մարդու ձեռքին է եղել երկար ժամանակ Իտալիայի բաղդը։

—«Times» լրագրին հեռագրում են Լօրէնցօ-Մարկեզէից. «Ստաս-սեկրետար Բէյցի համոզմունքով՝ բօէրները կարող են չարունակել պատերազմը էլի մի ամբողջ տարի՝ անկախ այն բանից, թէ ինչպէս կը վերջանան նրանց գործերը Օրանժեան հանրապետութեան մէջ։ Բօէրները, համարեա ամեն օր, պաշարեղէն են ստանում Լօրէնցօ-Մարկեզէյից։ Մախագօդօրպից ստացած տեղեկութիւններին նայելով՝ անգլիացի գերիների թիւը հետզհետէ աւելանում է, այնպէս որ այժմ Նօստգեդախտում 2000—3000 գերիներ կան։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութեան կառավարչի շրջաբերական հեռագիրը նահանգապետներին՝ ուղարկված յուլիսի 5-ին. «Ի նկատի առնելով զօրքերի տեղափոխութիւնը Սիբիրի երկաթուղով՝ Բարձրագոյն հրամայված է դադարեցնել գաղթականների երթը դէպի Սիբիր. այս պատճառով խնդրում եմ անյապաղ դադարեցնել անցագրերի եւ ազվկայագրերի տուչութիւնը, որոնք տրվում են գիւղական համայնքների լիազօրներին Սիբիր գնալու եւ այնտեղ հողեր ընտրելու համար. միեւնոյն ժամանակ խնդրում եմ ձեզ միջոցներ ձեռք առնել, որ գիւղացիներն ինքնակամ, առանց թոյլտուութեան, չը շարժվեն տեղերից եւ բացատրել նրանց ներկայ արգելքի պատճառը։ Այն գիւղացիներին, որոնք արդէն թոյլտուութիւն են ստացել գաղթելու, պէտք է խորհուրդ տալ, որ սպասեն գաղթականութեան վերանորոգման ընտրած տեղերում, նախազգուշացնելով նրանց, որ այս կարգադրութեան հակառակ գնացողները կարող են ճանապարհին բռնվել։ Դրա հետ միասին յուլիսի 10-ից, ցնոր կարգադրութիւն, բարձրացված է գաղթականական արտօնավճարի իրաւունքը երկաթուղային գծերի վրա եւրոպական Ռուսաստանից դէպի Սիբիր։ Այն գիւղացիներին, որոնց երկամեայ ժամանակամիջոցը լրանում է Սիբիրում հողեր ստանալու համար, նորից կը տրվի մի տարի եւս, որպէս զի նրանք չը կորցնեն այդ իրաւունքը։

Չինական արեւելեան երկաթուղու ինժեներ Պիետրօվսկու հեռագիրը Դօնօյից, յուլիսի 5-ից. «Յունիսի 28-ին ինժեներ Բօչարով 800 բեռնասայլով, 3,000 բանուորներով եւ բոլոր ծառայողներով, երկաթուղային պահապանների ուղեկցութեամբ, դուրս եկաւ Խինգանից դէպի Եակշի կայարանը, որ գտանվում է 310 վերստ ռուսաց սահմանից հեռու։ Կամուրջ չինելով՝ նա անցաւ Խայլարի մօտից եւ, երեւի, յուլիսի 6-ին կը հասնի Ցուրուխայտուշ։ Երկաթուղու 5-րդ բաժնի կառավարիչ Օֆֆենբերգ, լուրերին նայելով, գալիս է երկու օրվայ ճանապարհ նրանից յետոյ, որովհետեւ այդ բաժիններում բանուորների չափազանց մեծ հաւաքումն կայ (մօտ 6,000 մարդ)։ Ինժեներ Իւզովիչից ոչ մի տեղեկութիւն չը կայ։

Չինական արեւելեան երկաթուղու 2-րդ բաժնի կառավարիչ ինժեներ Ռիժովի հեռագիրը Դօնօյից, յուլիսի 3-ից. «Երկրորդ բաժնում ծառայողների եւ ռուս բանուորների մեծամասնութիւնը, երկաթուղային պահապանների ուղեկցութեամբ, աջողութեամբ հասաւ Հինգուրուխայտուշ եւ յունիսի 30-ին ուղեւորվեց դէպի Դօնօ, իսկ փոքրամասնութիւնը դիմեց դէպի ռուսական սահմանը, դէպի Արագայտուշ եւ Ուայլասուտայ։ Նրանց մասին առ այժմ տեղեկութիւն չը կայ։ Ես այնտեղ սուրհանդակ եմ ուղարկել։ Բանուորների մի մասը դեռ եւս չէ եկել անտառից, որտեղ պատրաստում էր շալակներ, բերում գետի մօտ եւ ուղարկում։ Ձեզ կարողանում գտնել վերահսկող Պերմիկինին, որ յունիսի 28-ին աշխատում էր ճանապարհի վրա եւ որի մասին չինացիները ասում են, թէ սպանված է։ Երրորդ բաժնի ծառայողները նոյնպէս աջողութեամբ հասան Նոր-Ցուրուխայտուշ։ Մօնգոլների ձեռքով ռուս բանուորների սպանութեան մի քանի դէպքեր պատահեցին, թէպէտեւ հեռացող երկաթուղային ծառայողներն եւ բանուորները առ այժմ անարգել անց են կենում Խայլար կայարանի մօտից, որտեղ կենտրոնացած են չինական եւ մօնգոլական զօրքերը 4 թնդանօթներով։ Հեռագրական հաղորդակցութիւնը գծի վրա կորված էր յունիսի 28-ին։ Խակ կայարանում եւ Զարմեռում բոլոր չինութիւններն եւ պահեստները կողոպտված ու այրված են։ Խայլար կայարանում տեղի ունեցաւ կողոպտումն, թէեւ փոքր չափով»։

«Правительственный Вѣстникъ»-ում տպագրված է. «Ամուրեան շրջանը, Խաբարովսկի գաւառի առաջին մասը, Ծովափնեայ շրջանի Ուսսուրիյսկայա, Կազաչեա եւ Իժնօ-Ուսսուրիյսկայա գաւառները, Բլագովեշչենսկ, Խաբարովսկ, Նիկոլսկ-Ուսսուրիյսկի եւ Վլադիվաստոկ քաղաքները Պրիամուրեան գեներալ-նահանգապետի կողմից յայտարարված են որպէս զինուորական դրութեան մէջ գտնվող տեղեր։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական նաւատորմի գլխաւոր կառավարիչը յուլիսի 2-ին Տակուից հեռագրում է, թէ յունիսի 30-ին, առաւօտեան, 12 ռուսական եւ 2 գերմանական բօտաներ, 2 ռուսական դաշտային թնդանօթախումբ եւ մի ֆրանսիական լեռնային թնդանօթախումբ առան չինական հիւսիս-արեւելեան դիրքերը, որոնք գտնվում էին Չինական ջրանցքի հիւսիսակողմում եւ թեւակողմային շարժումով արեւելքից՝ տիրեցին 12 թնդանօթների եւ պայթեցրին վառօդի երկու պահեստ։—Ռուս գեներալի հաղորդած տեղեկութեամբ՝ գերմանացիները, իբրեւ առաջապահներ, նշանաւոր ծառայութիւններ մատուցին։ Մի եւ նոյն ժամանակ երեք ամերիկական բատալիօններ, 700 անգլիացիներ, 2000 եապօնացիներ, 200 ֆրանսիացիներ եւ 50 աւստրիացիներ յարձակումն գործեցին արեւմուտքից զինարանի եւ չինական քաղաքամասի վրա։ Կռիւը տեւեց մինչեւ երեկոյ. կորուստը ծանր է, իսկ աջողութիւնը խախտուն։ Չինացիները յամառ դիմադրութիւն ցոյց տուին։ Երեկոյեան 9 ժամին դաշնակից զօրքերը, սաստիկ յոգնած, սկսեցին նահանջել արեւմտեան կողմից։ Դաշնակիցները կորցրին ընդամէնը 775 մարդ։ Ապա, ինչպէս հաղորդում են հեռագրով, յուլիսի 1-ին առնվեցին չինական դիրքերը, պարսպներով շրջապատված քաղաքն եւ միջնաբերդը։ Առնված են 62 թնդանօթներ։ Մանրամասնութիւններ չեն ստացված։

Յուլիսի 3-ին նաւատորմի գլխաւորը հեռագրում է Տակուից, թէ կանոնաւոր երկաթուղային երթեւեկութիւն Տեանձինի եւ Տեանձինի մէջ կը հաստատվի յուլիսի 5-ին։ Հրամանատարները որոշեցին թողնել երկաթուղին ռուսաց վարչութեան ձեռքին, մինչեւ որ հանգամանքները թոյլ տան ճանապարհը յանձնել նրա նախկին վարչութեանը։ Անգլիական ծովապետը պահանջում է, որ ճանապարհի յանձնումը նախկին վարչութեան տեղի ունենայ հէնց հիմա։ Ռուսներն ուղղեցին ճանապարհը եւ գրաւեցին նրան։

Կ. ՊՕԼԻՍ։ Բէյրութ քաղաքի կենտրոնում ժանտախտի նշաններով հիւանդանալու հինգ դէպքեր պատահեցին։ Տասնօրեայ կարանտին է նշանակված Բէյրութից եկողների համար։

ԼՕՆԴՕՆ։ Յուլիսի 2-ին ուղարկված Սէյմուրի հեռագիրն ասում է. «Դաշնակից զօրքերը, յունիսի 30-ին Տեանձինի չինական քաղաքամասի վրա գործած յարձակման ժամանակ, տաք կռիւ բռնվեցին, որ տեւեց առաւօտեան 2 ժամից մինչեւ երեկոյեան 8 ժամը։ Քաղաքի պարիսպները դեռ եւս առնված չեն։ Յուլիսի 1-ին, առաւօտեան, եապօնացիները պայթեցրին դռները եւ ներս խուժեցին քաղաքը. մնացած պետութիւնների զօրքերը ժամանակի ետեւից, առանց հարգիպելու դիմադրութեան։ Քաղաքը եւ մարտկոցները առնված են։ Աջակողմեան թեւի վրա ռուսները վերցրին 12 թնդանօթախումբ, բաղկացած փոքր թնդանօթներից, որոնք գտնվում էին Լուտայի ջրանցքի ափերին։ Մնացեալ բոլոր զօրքերը կռուում էին ձախակողմում։ Պատերազմին մասնակցող բոլոր զօրքերի ընդհանուր թիւը հասնում էր 8,000-ի։

Կորուստները—700 սպանված եւ վիրաւորված։ Եապօնացիների կորուստը ամենից աւելի ծանր է։ Անգլիացիներից սպանված են 93 հոգի։ Չինական զօրքերը ցրվեցին եւ փախան ու անյայտացան»։ Սէյմուրի այս հեռագիրը Բրօդրիկ կարդաց համայնքների ժողովում նիստից յետոյ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Սէուլի ամերիկական դեսպանը հաղորդում է, թէ «Մեծ բռունքները» եւ չինաց զօրքերը կանգնած են մի քանի մղոն հեռու Կօրէայի սահմանից։ Տեղացիները սարսափահար փախչում են. օտարազգիների դրութիւնը առայժմ անվտանգ է, բայց Կօրէայի իշխանութիւնները մեծ մտահոգութեան մէջ են։

ԼՕՆԴՕՆ։ Բօքէրտս հեռագրում է Պրէտորիայից, յուլիսի 4-ից. «Թշնամին երէկ վճռական յարձակում գործեց Պոլկերիւյի ձախակողմեան թեւի եւ Գենտօնի հրամանատարութեան տակ գտնվող ամբողջ ոյժի ձախակողմեան թեւի վրա։ Թշնամին մի քանի անգամ փորձեց յարձակումով առնել մեր դիրքը։ Բանը հասաւ ձեռնամարտի։ Հրացանաձիգներին առաջարկեցին անձնատուր լինել, բայց իրլանդական հրացանաձիգները եւ գաղութային զօրքերը քաջ պաշտպանում էին դիրքը։ Թշնամիներից 15 հոգի սպանվեցին, 50-ը վիրաւորվեցին եւ 4-ը գերի ընկան. անգլիացիներից 7 հոգի սպանվեցին, 29-ը վիրաւորվեցին եւ 23-ը անյայտ կորան։ 500 մարդ 5 թնդանօթներով ճղեցին Գէնտէրի եւ Ռէնդլի բրիգադների կազմած շղթան Վիֆկիմի եւ Ֆիկսբուրգի միջեւ, եւ դիմեցին դէպի Լինգլէյ՝ քայլ առ քայլ հալածվելով Պօչէֆի եւ Բրօդվուդի բրիգադներից.

ՇԷՐԲՈՒՐԳ։ Այստեղ հաւաք Լուբէ եւ ողջունվեց ցնծալից աղաղակներով։

ԲՐԻՍՍԷԼ։ Շանղհայի բելգիական հիւպատոսը հաղորդում է, թէ Պէկինում եղած օտարազգիները, չինական աղբիւրներին նայելով, ապատան են գտել իշխան Զժինի պալատում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փոխ ծովապետ Սկրիդլով նշանակվում է Խաղաղ ովկիանոսի նաւատորմի հրամանատար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 6-ին, առաւօտեան. Կրանօե Սելօյի զինուորական դաշտում տեղի ունեցաւ Բարձրագոյն զօրահանդէս, պարսից շահի ներկայութեամբ։ Զօրանցքից յետոյ զօրքերը արժանացան արքայական «շնորհակալութեան»։ Թագաւոր Կայսրը շնորհաւորեց գվարդիական թնդանօթաձիգ դիվիզիոնի 2-րդ բատարէային Հեռաւոր Արեւելք արշաւելու համար։ Հրաժեշտ տալով բատարէային, թագաւորը բարի ճանապարհ եւ բարի վերադարձ ցանկացաւ նրան։

Յուլիսի 5-ին, երեկոյեան, Պետերհոֆի Մեծ պալատում ճաշ կայացաւ ի պատիւ պարսից շահի՝ Բարձրագոյն ներկայութեամբ։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական բանկը բարձրացրեց դիսկոնտը 3-ից 4%։

ՇԱՆԳՀԱԵ։ Յուլիսի 5-ից, չինական պաշտօնական աղբիւրներից հաղորդում են, թէ գեներալ Նիէ սպանվեց ճակատամարտում Տեանձինի մօտ։ Շանդուն նահանգում բոլոր օտարազգիների գոյքը ոչնչացրած է։ Եանչինում նահանգապետի զօրքերը ջարդեցին, մեծ կորուստներ հասցնելով, Տունֆուղեանի զօրքերը Յգեաչժօուի մօտ, Տեանձինից դէպի հարաւ, Զժիլիի եւ Շանդունի սահմանի մօտ։

ՋԻՖՈՒ։ Յուլիսի 2։ Նիւշուանում դրութիւնը վերին ասիֆանի լուրջ է. եօթանասուն կօզակ զետեղված են քաղաքում, եւ եզերքի մօտ կանգնած են երկու եապօնական եւ մի ռուսական թնդանօթաձիգ նաւ։ «Մեծ բռունցքները» սեղմ պաշարել են քաղաքը։

ՇԱՆԳՀԱԵ, 4 յուլիսի։ Գործերի դրութեան մասին Պեկինում յունիսի 30-ից ի վեր չը կան հաւաստի տեղեկութիւններ։ Օտարազգի եւ չինական մամուլի մէջ տարածվում են, ի հարկէ, շատ լուրեր, որոնք սաստիկ ահ են առաջացնում, բայց երկաթուղու վերատեսուչ Շէֆնից, որի միջոցով միայն կարելի էր սատ-

նալ լուրեր, չէ ստացվել ոչ մի տեղեկութիւն, բացի խռովութիւնների սկզբնաւորութիւնը հաղորդող լուրից։

ՉԻՖՈՒ։ Ամերիկեան թղթակիցները հաղորդում են, թէ Պեկինում օտարազգիները յունիսի 23-ին դուրս յարձակվեցին, որից յետոյ ռմբակոծութեան ենթարկվեցին, բայց յունիսի 26-ից ի վեր գտնվում են ռուսերից ապահով չէնքի մէջ։ Կայսրը իբր թէ սպանված է, եւ իշխան Տուանը գրաւել է գահը։ Նէյ գեներալը, որ պաշտպան հանդիսացաւ օտարազգիներին, ստիպված եղաւ ինքնասպանութիւն գործել։—Գերմանական պօստատար չոգենաւը լուր բերեց, թէ յունիսի 24-ին Պեկինում եղած օտարազգիները դեռ կենդանի էին։

ՇԱՆԳՀԱՅ։ Պաշտօնական։ Օտարազգի կանանց եւ երեխաներին առաջարկված է թողնել նաւահանգիստը։ Եանձիի եւ Պոյապօնեան լճի ափերին, Նիւձանի մօտ, ապստամբութիւն ծագեց. մի քանի միսիոնարներ սպանված են, եկեղեցիները հրկիզված, հեռագրական հաղորդակցութիւնը Խանկօուի եւ Նիւձանի միջեւ խզված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գլխաւոր շտաբից ստացված տեղեկութիւնների համաձայն, դեռ եւս անփոփոխ է մնացել Խարբինում եւ նրանից հարաւ գտնված ռուս ազգաբնակութեան դրութիւնը, որին կարել են ռուսաց սահմանից չինացի ապստամբները եւ նրանց յարած զօրքերը։ Այժմ գործը այնպէս է դրված, որ աներեւակայելի է որ եւ է անսպասելի բան։ Դրա հետ միասին տեղեկացնում են, որ Սունգարի գետափի զօրաբաժինը գեներալ Ալէքսէեվի, Նիկոլաեւսկինը՝ գեներալ-մայոր Զիլինսկի եւ Ստարոտուրուխատունը՝ գեներալ Օրլովի հրամանատարութեամբ աշխոյժ կերպով արշաւանք սկսեցին, եւ բոլոր կարգադրութիւնները այնքան արագ կատարեցին, որ չինացիք չէին կարող սպասել այդ։ Ընդհանուր հրամանատարութիւնը յանձնված է փոքրված գեներալներից մէկին, գեներալ-լեյտենանտ Գրուբսկիին, իսկ նրա օգնական ժամանակաւորապէս նշանակված է գեներալ-մայոր Սուբբոտիչ, որ իր ծառայութեան մեծ մասը անցրել է Ասիայում եւ շտաբի գլխաւոր է Պօրտ-Արթուրում։

ԲԵՐԼԻՆ։ Շրջանաւային նաւատորմի հրամանատարը հաղորդում է Տակուից, յուլիսի 3-ից, հետեւեալ տեղեկութիւնը, որ յայտնել է Ուզէդօմ. «Յունիսի 30-ին Տեանձինի չինական մասը հաղիւ կարողացաւ մի փոքր դիմադրել եապօնացիների, անգլիացիների եւ ամերիկացիների յարձակման։ Քաղաքը գտնվում է դաշնակիցների ձեռքին։ Արեւելեան կողմում յուլիսի 1-ին կռուում էին ռուսները չինական բանակը գրաւելու համար։ Յուլիսի 2-ին չինական բանակի միջնաբերդի վրա արդէն ծածանում էին ռուսաց դրօշակները. դրանով վերջացաւ քաղաքի գրաւումը։ Յունիսի 30-ի ճակատամարտի մասին Ուզէդօմ հաղորդում է. «Ես Ալէքսէեվի գլխաւոր ընակարանումն էի յարձակումի սկզբնաւորութիւնից մի ժամ անցած։ Գերմանացոց եւ ռուսաց հետեւակ զօրքից վեց հարիւր վերստ հեռու սարսափելի պայթումն առաջացաւ, այնպէս որ շատ մարդիկ վայր ընկան, իսկ ֆրանսիացոց լեռնային թնդանօթաձիգների ջորիները փախցրին գլուխները։ Գեներալ Ստէսսէլ միակն էր, որ վերք ստացաւ, այն էլ թեթեւ։ Մի ժամ անցած, նա արդէն կարողացաւ վերսկսել հրամանատարութիւնը։ Նա յայտնեց, որ երբէք չէ տեսել աւելի լաւ զինուորներ, քան գերմանական նաւասաիները։ Ստէսսէլ բոլոր կռիւներում Տեանձինի շրջակայքում փայլուն կերպով հրամանատարութիւն էր անում ռուս եւ գերմանական զօրքերին։ Գերմանացիք այդ կռուում շատ քիչ կորուստ ունեցան՝ շնորհիւ իրանց արագ գործողութիւններին։ Մօտ ժամը 7-ին գերմանացիք ռուսների հետ միասին առան չինաց դիրքը 22 թընդանօթների հետ։ Գերմանացիների զօրքերը իրանց դիրքերում ռմբակոծութեան ենթարկվեցին միջնաբերդից մինչեւ ժամի 11-ը, բայց կորուստ չունեցան. յոգնած վաշտերը ժամի մէկի մօտ գնացին տները։—Յուլիսի 1-ին, առաւօտեան, Ուզէդօմ երկու պահեստի վաշտերով, որ սակայն պէտք չեղաւ գործի դնել, գնաց կարճ ժամանակով քաղաքի չինական մասը, որ արդէն այրված էր ու աւերված։ Աննշան ժամանակութիւնը այդ նուաճման մէջ պատկանում է եապօնացիներին։ Վերջին ժամանակներս չինական թնդանօթաձիգները, որոնց թիւը քանի գնում աւելանում էր, հետզհետէ աւելի եւ աւելի լաւ էին ռումբ ձգում, այնպէս որ նրանց ռումբերը ամեն օր ընկնում էին նոյն իսկ գերմանական հիւպատոսարանը, բանկը եւ կլուբը, որոնք համեմատաբար լաւ էին պատսպարված եւ որոնց մէջ ապաստանված էին գերմանացի վիրաւորվածները։ Այդ խանգարից հանգստանալ, որ անհրաժեշտ էր յոգնեցուցիչ արշաւանքից յետոյ։—Գերմանական կայսրի հրովարտակը Պեկինում պաշարված օտարազգիների փրկութեան համար տալիք վարձատրութեան մասին շնորհակալութեան զգացմունք է զարթեցնում այստեղ բոլոր ազգութիւնների մէջ։ Այդ հրովարտակը այստեղ տարածել է Տեանձինի եապօնական հիւպատոսը, որ յոյս ունի սուրհանդակներ գտնել Պեկին հասցնելու համար։ Յուլիսի 2-ին եւ 3-ին եկան մօտ 1000 եապօնացիներ (այստեղ ուղարկվող զօրաբաժնի առաջին մասը)։ Յուլիսի 3-ին եկաւ առաջին չոգենաւը հնդկական զօրքերով։

ԼՕՆԴՕՆ։ Լուրերին նայելով, Նինպօյի խռովարարութիւնների մասին ստացված տեղեկութիւնները շատ չափազանցրված են. այնտեղ ամեն ինչ հանգիստ է։ Նինպօյում գտնված չինացիների մէջ սարսափ տարածվեց, որ այժմ թուլանում է. դրա պատճառն էր Տեանձինում անմեղ չինացիների կոտորածի լուրը։ Քաղաքային վարչութիւնը, օտարազգի գաղութներում ապրող չինացիների պաշտպանութեան համար, կոչ հրատարակեց, որ լաւ ներգործութիւն ունեցաւ։

ՇԱՆԳՀԱՅ. Խոնան եւ Դուբէյ նահանգների նահանգապետները, իրանց զօրքերի գլուխն անցած, գնում են Պեկին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թի յուլիսի 10-ին, ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Ջրմուղ խողովակի շինութիւնը Օլգինսկայա փողոցից մինչեւ Խանգելդեանցի տունը Սմիտսովկայա փողոցի վրա, մօտաւորապէս 2000 սաժէն երկարութեամբ՝ 0, 25×0, 16 կտրուածքով եւ 10,30 պագ. սաժէն, 0, 35×0, 0, 25 կտրուածքով։

Աճուրդին ժամանակել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը քաղաքային վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը 9 ժամից մինչեւ 3-ը։

(հ. ո. չ.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թի յուլիսի 20-ին, ժամը 12-ին, նշանակված է նոր աճուրդ, չը կայացածների փոխանակ, կապալով տալու քաղաքային հողի այն կտորը, որ գտնվում է 7-րդ քաղաքամասում, Հալաբարում, 23 դեսիատին տարածութեամբ, բացառապէս գաջ պատրաստելու համար։

Ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը քաղաքային վարչութեան 4-րդ բաժանմունքում, ժամը 8-ից մինչեւ 1-ը, բոլոր լի օրերը։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յուլիսի 9-ին, երեկոյեան 10 ժամին նշանակված է

երկրորդ ընդհանուր ժողով

կանդիդատներ ընտրելու համար։

(հ. չ.) 2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տարւոյս սեպտեմբերին լինելու է Ներսիսեան հոգեւոր դպրոցի համար հոգաբարձուների ընտրութիւն, ուստի պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի բ. մասի պ.պ. ծխականներին, որ իւրաքանչիւր տան միայն աւագագոյնը, որի տարիքը 25-ից պակաս չէ, եթէ մոռացմամբ անունը չէ գրել տուել իր ծխատէր քահանայի ցուցակում՝ թող չտապէ գրել տալ մինչեւ օգոստոսի մէկը։

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝

3—6 (2) Գրիգոր քահ. Մանդակունի

3—52 (2.)

Յուլիսի 3-ից մինչեւ 12-ը

Յուլիսի 3-ին, 4-ին, 5-ին, 6-ին, 7-ին, 8-ին, 10-ին եւ 11-ին

Ընդունված սովորութեան համաձայն, տարին մի անգամ

Պ. Ս. ԴՈՐՈԺՆՈՎԻ

խանութում

Սօլոլակսկայա փողոց, տ. Գուրգենովի, տելեֆոն 583

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Ահագին զիջումով նախկին գներից, բուբլիին 25%-ից մինչեւ 40%

Կը վաճառվեն ամեն տեսակ քաթանէ ապրանքներ

ՍԱՐՍՏՕՎԵԱՆ ՍԱՐՊԻՆԿԱ

Կիսէյա, պիկէ, բատիստ, մեսալինէ, չէ-սու-չա, պատրաստ փոխնորդ մարգկանց եւ կանանց, վերմակներ ամարային եւ տաք թաւիշէ գորգեր եւ սփռոցներ, վարագոյրների տիւլ (մնացորդներ)։

Վաճառման կարգը մինչեւ յուլիսի 12-ը հետեւեալն է. խանութը բաց կը լինի առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 2-ը, ժամի 2-ից փակ կը լինի մինչեւ 5-ը եւ բաց կը լինի ժամի 5-ից մինչեւ 8-ը։

Մանրութիւն. Մեծաքանակ վաճառման ժամանակ ապրանքը ծախվում է միմիայն կանխիկ դրամով։

П. С. ДОРОЖНОВЪ. 4—4

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ ԱՄԱՌԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԲՕՐԺՕՄ ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ, ԻՍԿ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Թէ Բօրժոմում եւ թէ Թիֆլիսում ընդունում է աշակերտներ, պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, բէալական, առեւտրական եւ այլ ուսումնարանների համար։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Աւանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն։

Նոյնտեղ ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ։ Օրարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ։

Հասցէն՝ БОРЖОМЪ. Гротовская ул., ПАНСІОНЪ ТЕРЪ-АКОПВА. ТИФЛИСЪ, Гановская ул. № 11. 4—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հարիւրի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, և երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիկօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղը. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 5—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում Բաթումից չորեքշաբթի, 19 յուլիսի (1 օգոստ.) ՄԻՆԳՐԷԼԻ չոգենաւը, նաւապետ Շիլթ, եւ այդպէս յաջորդակարգ, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ռ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խոջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (հ. հ. չ.) 5—20

Ֆինանսների ministրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (հ. չ.) 4—25

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Іюля 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.